



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ,
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ

2017-18 ուս. տարի

ԵՐԵՎԱՆ 2018

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2017-18 ուս. տարի

2017-18 ուս. տարում ԿԲՌՊՆՏ բաժնի աշխատանքները կազմակերպվել են ուսումնամեթոդական կենտրոնի կողմից մշակված աշխատանքային պլանին համապատասխան:

Բաժնի կողմից կազմակերպվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- հաջորդ հավատարմագրման գործընթացն ապահովելու նպատակով ՀԱԱՀ գործունեության ինքնավերլուծություն՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված 10 չափանիշներին համապատասխան,
- համալսարանի գործունեության վարկանիշավորման ցուցանիշների հավաքագրում և մշակում,
- համալսարանի ուսանողների կարիքների բացահայտում և գնահատում,
- համալսարանի շրջանավարտների կարիքների բացահայտում և գնահատում,
- համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների բացահայտում և գնահատում,
- հարցումների արդյունքների մուտքագրում, մշակում և վերլուծություն SPSS ծրագրի միջոցով,
- «Ժամանակակից ուսուցման մեթոդներ» թեմայով սեմինարների կազմակերպում ամբիոնների դասախոսների համար,
- համալսարանի կայքի «Որակի ապահովում» բաժնի թարմացում տեղեկատվական նյութերով,
- 2012-2016 թթ. համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) հաշվետվության հաստատում գիտական խորհրդի կողմից,
- Համալսարանի 2018-2022 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակում և հաստատում գիտական խորհրդի կողմից,
- Համալսարանի գործունեության գնահատման համակարգված ցուցանիշների (2018-2022 թթ.) մշակում և հաստատում գիտական խորհրդի կողմից,
- մասնակցություն որակի ապահովման ոլորտի աշխատաժողովներին:

1. Համալսարանի գործունեության ինքնագնահատում և ինքնավերլուծություն

2015 թ.-ի մարտի 15-ին ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ ՀԱԱՀ-ին շնորհվել է Ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարով, որի ժամկետը լրանում է 2019 թ.-ի մարտի 15-ին:

2018 թ.-ի փետրվար ամսին համալսարանը դիմել է ՀՀ ՈԱԱԿ հաջորդ հավատարման համար: ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել է ՀԱԱՀ-ի կողմից ներկայացված դիմումը, որի հիման վրա սկսվել է համալսարանի գործունեության ինքնավերլուծության գործընթաց ՀՀ Կառավարության կողմից հաստատված 10 չափանիշների համար:

2. Վարկանիշավորման գործընթացի կազմակերպում և տվյալների հավաքագրում

2017 թ.-ի նոյեմբեր ամսին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ստացված գրությանը համապատասխան բաժնի կողմից իրականացվել է համալսարանի վարկանիշավորման ցուցանիշների հավաքագրում, վերլուծում և համակարգում կառուցվածքային ստորաբաժանումներից:

Վարկանիշավորումը ներառում է համալսարանի գործունեության 99 ցուցանիշ, որոնք արտացոլում են ՀԱԱՀ ուսանողական համակազմի տվյալները, նրանց առաջադիմության և ձեռքբերումների ցուցանիշները, ՊԴԿ-ի գործունեության ցուցանիշները գիտահետազոտական ոլորտում, տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայությունների գործունեության ցուցանիշներ:

Հավաքագրվել և հավելվածների տեսքով ներկայացվել են համալսարանի արտաքին կապերի դեպարտամենտի, պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեությանը վերաբերող տվյալներ (գիտական հրապարակումներ և այլն), գրադարանային ֆոնդերի մասին տվյալներ:

3. Համալսարանի շահակիցների կարիքների բացահայտման գործընթացներ

3.1. Բակալավրի 1-ին կուրսեցիների շրջանում հարցման կազմակերպում

ՀԱԱՀ Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի տարեկան պլանի համաձայն իրականացվել է համալսարանի բակալավրիատի 1-ին կուրսի ուսանողների շրջանում հարցում:

- Հարցման նպատակն էր՝**
1. բացահայտել ուսանողների կարիքները,
 2. բացահայտել ուսանողների տեղեկացվածության մակարդակը,
 3. գնահատել և վերլուծել ուսանողների կարիքները:

Հարցմանը մասնակցել են ՀԱԱՀ յոթ ֆակուլտետներից 1-ին կուրսի շուրջ 394 ուսանող, որոնցից 296-ը արական, 98-ը՝ իգական սեռի ներկայացուցիչ:

Հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները՝

- 1-ի կուրսի ուսանողները տիրապետում են օտար լեզուների, մասնավորապես անգլերենի, գերմաներենի, ֆրանսերենի:
- *Մասնագիտությունների, ընդունելության և ուսուցման պայմանների վերաբերյալ* 1-ին կուրսեցիները, որպես դիմորդ, հիմնականում տեղեկացել են ծանոթներից, համալսարանում սովորող ուսանողներից, համալսարանի կայք էջից:
- 1-ի կուրսի ուսանողների մեծ մասը նշել է, որ ընտրել է ՀԱԱՀ-ը, քանի որ **համալսարանում կան մասնագիտություններ, որոնք հետաքրքրում են իրենց և ավելի հեշտ է ընդունվել, քան այլ համալսարան:**
- Հարցման մասնակիցների գերակշռող մասը (379 ուսանող) նշել է, որ **համալսարանում առկա են ուսումնական գործընթացի կազմակերպման բարենպաստ պայմաններ:**
- Հարցված ուսանողներին համալսարանում դուր է գալիս **դասավանդման որակը, համալսարանի դրվածքը, պարապմունքների անցկացման ձևը:**
- Ուսանողներին հատկացվում են **կուրատոր դասախոսներ:**
- Ուսուցման **ընթացքում կիրառվում են ուսուցման նորարարական տեխնոլոգիաներ (երկխոսություն, բանավեճ, դերային խաղեր և այլն):**
- Դասավանդման որակը և դասախոսների մասնագիտական որակները ուսանողների գերակշիռ մասի կողմից գնահատվել է գերազանց և լավ:

3.2.2-4 կուրսի ուսանողների կարիքների բացահայտում և գնահատում

ՀԱԱՀ Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի տարեկան պլանի համաձայն իրականացվել է համալսարանի բակալավրիատի 2-ից 4-րդ կուրսի ուսանողների շրջանում հարցում:

Հարցման մասնակցել են 580 արական սեռի և 399 իգական սեռի ներկայացուցիչներ:

Հարցման վերլուծության արդյունքներն են՝

- հարցված ուսանողները Համալսարանի ռեսուրսները գնահատել են լավ և բավարար,
- ամբիոնների կողմից տրամադրվող խորհրդատվական ծառայություններից օգտված ուսանողների 39.8%-ը նշել է, որ ամբողջովին բավարարված է, իսկ 55.04%-ը գրեթե բավարարված է տվյալ ծառայությունից,
- համալսարանում առկա կառույցների մատուցած ծառայություններից օգտված ուսանողները դրանց գործունեությունը հիմնականում գնահատել են գերազանց և լավ,
- ինտերնետից օգտվելու հնարավորություններից, մարզադահլիճների վիճակից բավարարվածության մակարդակը տարբեր է, սակայն տվյալ հարցին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել,
- հարցված ուսանողների 53.83%-ը անբավարար են գնահատել սանհանգույցների վիճակը:

3.3.Շրջանավարտների շրջանում հարցման կազմակերպում

2018 թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին իրականացվել է հարցում համալսարանի շրջանավարտների շրջանում:

Անկետավորման գործընթացին մասնակցել է շուրջ 271 շրջանավարտ:

Հարցմանը մասնակից 271 շրջանավարտներից 164-ը իգական սեռի ներկայացուցիչներ էին, 107-ը՝ արական:

Հարցման նպատակն էր բացահայտել և գնահատել համալսարանի շրջանավարտների բավարարվածության մակարդակը կրթության որակից:

Հարցված շրջանավարտների 42.01%-ը պատասխանել են, որ ամբողջությամբ բավարարված են, իսկ 45.35%-ը՝ ավելի շուտ բավարարված են **ՀԱԱՀ-ի կողմից տրված կրթությունից:**

Շրջանավարտների գերակշիռ մասը ամբողջությամբ բավարարված են կամ գրեթե բավարարված են՝

- ստացված տեսական գիտելիքների արդիականությունից,
- տեսական գիտելիքների համապատասխանությունից տրվող որակավորմանը,
- տեսական գիտելիքների մասնագիտական գործունեության մեջ կիրառման կարողությունից,
- գործնական հմտությունների արդիականությունից,
- աշխատանքային պահանջներին որակավորման համապատասխանությունից,
- գործնական խնդիրների ինքնուրույն լուծման կարողությունից,
- ուսումնառության ընթացքում ձևավորված ինքնակազմակերպման հմտությունից,
- ինովացիոն մեթոդների և տեխնոլոգիաների տիրապետումից,
- տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետումից:

3.4. ԱրոՖեսորադասախոսական կազմի կարիքների գնահատում և վերլուծություն

2017-2018 թթ. ուս տարում իրականացվել է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների գնահատում և վերլուծություն:

Հարցման նպատակն է եղել՝

1. գնահատել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կարիքները,
2. չափել դասախոսի վերաբերմունքը համալսարանում կատարվող փոփոխությունների նկատմամբ,
3. բացահայտել այն գործոնները, որոնք կնպաստեն դասախոսներին ավելի արդյունավետ աշխատելուն:

Հարցմանը մասնակցել են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի 440 ներկայացուցիչներ:

Հարցմանը մասնակից ՊԴԿ-ի ներկայացուցիչները բավարարված են աշխատանքային միջավայրից, տեղեկատվության և խոսքի ազատության մակարդակից, դեկավար կազմի կողմից օժանդակումից:

Շահակիցների շրջանում անցկացված հարցումների արդյունքների ամբողջական տարբերակը ներկայացված է «ՀԱԱՀ շահակիցների բավարարվածության մակարդակի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվության» մեջ:

Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում կատարված հարցումների ընթացքում 440 դասախոսներ պատասխանելով «**բաց հարցերին**» վեր են հանել որոշ խնդիրներ:

Հարցադրմանը մասնակցած 440 ներկայացուցիչներից՝

- **28.3** %-ը նշել է, որ անհրաժեշտ է **կատարել աշտավարձի բարձրացում** (հաշվի առնել գիտական գործունեության արդյունքները):
- **31,82**%-ը նշել է, որ անհրաժեշտ է՝
 - ✓ **Լսարանները, լաբորատորիաները, ամբիոնները ապահովել համակարգչային միջոցներով, շերտավարագույրներով, գրատախտակներով, դիդակտիկ նյութերով, օդափոխիչներով և այլ նյութատեխնիկական միջոցներով, կահավորել կահույքով:**
 - ✓ **ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում (համակարգչային լաբորատորիաները հագեցնել), ստեղծել ներքին ցանց լաբորատորիաների միջև,**
 - ✓ **անասնաբուժական ֆակուլտետին տրամադրել լաբորատոր փորձնական կենդանիներ, լսարանային ֆոնդը համալրել:**
- **8,18** %-ը նշել է, որ անհրաժեշտ է **վերանայել բացակայությունների հաշվառման և լրացման կարգը, ինչպես նաև վերանայել վերահսկողությունը հաճախումների առումով:**
- **7,50** %-ը նշել է, որ անհրաժեշտ է **բարելավել մասնաշենքերի հիգիենիկ պայմանները, վերանորոգել աշխատանքային սենյակները, լսարանները: Նորոգել կահույքը, սանհանգույցը՝ տեղադրելով չորացնող օդամղիչներ: Ցածր հարկերի և բոլոր մասնաշենքերի լսարաններում ձմռանը ապահովել ջեռուցումը և վերանորոգել:**
- **7,05** %-ը նշել է, որ **ցանկալի կլիներ վերապատրաստումները կազմակերպվելին արտասահմանյան երկրներում, ոչ թե տեղական բուհերում, և դա վերաբերվեր բոլորին, ոչ թե յուրահատուկ անձանց: Բոլոր դասախոսներին հասանելի**

դարձնել զարգանալու հնարավորությունները (կոնֆերանսներ, գործուղումներ, փորձի փոխանակումներ և վերապատրաստման ծրագրեր), մեծացնել վերապատրաստումների շրջանակը:

- 7,05%-ը նշել է, որ ցանկալի կլիներ տանել աշխատանքներ, ըստ որի հնարավոր լինի օգտվել բուժ. ապահովագրությունից, սոց. փաթեթի առկայությունից:

4. Համալսարանի ԳԱՅ-երի հավաքագրում և վերլուծություն

2017-18 ուս. տարում վերլուծվել և հաշվետվության ձևով ներկայացվել են ՀԱԱՀ գործունեության առանցքային ցուցանիշներն ըստ հետևյալ ուղղությունների հինգ տարվա համար (2012-2016 թթ.)`

- ընդունելություն և ուսանողական համակազմ,
- ուսումնական գործընթաց,
- ռեսուրսներ և կառավարում,
- ենթակառուցվածք,
- գիտություն և ինովացիա,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

[ՀԱԱՀ գործունեության առանցքային ցուցանիշները \(2012-2016 թթ.\)](#) տեղադրվել են համալսարանի կայքի «Որակի ապահովման» բաժնի «Հաշվետվություններ» էջում` համալսարանի շահակիցներին հասանելի լինելու համար:

5. ՀԱԱՀ զարգացման (2018-2022 թթ.) ռազմավարական ծրագրի մշակում

2018 թ.-ին ավարտվել է ՀԱԱՀ զարգացման 2012-2017 թթ. ռազմավարական ծրագրի իրականացումը, որի համար կատարվել է արդյունքների վերլուծություն և ներկայացվել [հաշվետվության](#) տեսքով:

«Ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկում, չափումներ և գնահատում» ընթացակարգին համապատասխան մշակվել են ՀԱԱՀ գործունեության գնահատման [սլաքային առանցքային ցուցանիշները](#), և իրականացվել է փաստացի [ցուցանիշների](#) մշտադիտարկում, հավաքագրում և վերլուծություն 5 տարվա կտրվածքով հետևյալ ուղղություններով`

- ուսանողների ընդունելություն և ընդհանուր համակազմ,
- կադրեր,
- ենթակառուցվածքներ,

- հետազոտություն և զարգացում,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ և համացանց,
- արտաքին կապեր և միջազգայնացում:

[ՀԱԱՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների](#) վերլուծությունը հիմք է ծառայել ՀԱԱՀ-ի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման համար:

2018 թ.-ին մշակվել է [ՀԱԱՀ զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագիրը](#) և դրա [իրականացման պլան-ժամանակացույցը](#): ՀԱԱՀ զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագրում հավելվածի տեսքով ներկայացված է նախորդ ռազմավարական ծրագրի իրականացման SWOT վերլուծությունը:

ՀԱԱՀ զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագրի մշակմանը մասնակցել են ինչպես համալսարանի ղեկավար կազմը, այնպես էլ ֆակուլտետների ներկայացուցիչները (ամբիոնի վարիչներ, դասախոսներ):

ՀԱԱՀ զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագրի մշակման համար հիմք են ծառայել շահակիցների շրջանում բացահայտված կարիքները:

ՀԱԱՀ զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագրի նախագծային տարբերակը տրամադրվել է ֆակուլտետներին՝ քննարկումներ կազմակերպելու և առաջարկություններ և դիտողություններ անելու նպատակով:

Լայնածավալ քննարկում կազմակերպելու նպատակով ռազմավարական ծրագրի նախագիծը տեղադրվել է համալսարանի պաշտոնական կայք էջում:

ՀԱԱՀ զարգացման (2018-2022 թթ.) ռազմավարական ծրագրում ամրագրված է **ուր** ռազմավարական ուղղություն/գերակայություն, դրանց համար սահմանված նպատակները, խնդիրները, միջոցառումները, ռազմավարական յուրաքանչյուր նպատակի իրականացումը ապահովող առաջընթացի գնահատման ցուցիչները՝

- *կրթական միջավայրի և գործունեության զարգացում* (ամրագրված է 4 խնդիր և դրանցից բխող միջոցառումները),
- *գիտահետազոտական և նորարարական գործունեության զարգացում* (ամրագրված է 5 խնդիր և դրանցից բխող միջոցառումները),
- *ագրոպարենային ոլորտի խորհրդատվական գործունեության զարգացում և կատարելագործում* (ամրագրված է 5 խնդիր և դրանցից բխող միջոցառումները),

- *կադրային ներուժի զարգացում* (ամրագրված է 3 խնդիր և դրանցից բխող միջոցառումները),
- *ենթակառուցվածքների և ռեսուրսային կազմի զարգացում* (ամրագրված է 2 խնդիր և դրանցից բխող միջոցառումները),
- *միջազգային գործունեություն, արտաքին կապերի ընդլայնման և միջազգային զարգացում* (ամրագրված է 3 խնդիր և դրանցից բխող միջոցառումները),
- *կառավարման համակարգի կատարելագործում և զարգացում* (ամրագրված է 4 խնդիր և դրանցից բխող միջոցառումները),
- *համալսարանի ֆինանսական գործունեության զարգացում և ֆինանսական կայունության ապահովում* (ամրագրված է 2 խնդիր և դրանցից բխող միջոցառումները):

ՀԱԱՀ զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագրում ամրագրված են ռազմավարական նպատակների իրականացման կատարողականի ցուցիչները (քանակական, որակական):

ՀԱԱՀ զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագրին համապատասխան լրամշակվել են [ՀԱԱՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները \(2018-2022 թթ.\):](#)

ՀԱԱՀ զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագրի հիման վրա մշակվել են ֆակուլտետային ռազմավարական ծրագրեր համալսարանի [7 ֆակուլտետների համար](#):

[Ֆակուլտետային ռազմավարական ծրագրերը](#) քննարկվել են ֆակուլտետների ամբիոններում, ներկայացվել ֆակուլտետային գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը, որտեղ որպես շահակիցներ ներգրավված են համալսարանի վարչական կազմը, ՊԴԿ-ը, ուսումնառողները: ՀԱԱՀ ֆակուլտետային ռազմավարական ծրագրերը տեղադրվել են համալսարանի պաշտոնական կայքում:

6. Սեմինարների կազմակերպում և իրականացում

2017/18 թթ. ուս.տարում Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի կողմից կազմակերպվել և իրականացվել են «Ժամանակակից ուսուցման մեթոդները» թեմայով սեմինարներ Ագրոնոմիական, Ագրոբիզնեսի և շուկայաբանության, Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետների 6 ամբիոններում՝

- Ագրոնոմիական ֆակուլտետ

- Ընդհանուր կենսաբանության ամբիոն,
- Ընդհանուր երկրագործության ամբիոն:
- **Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ**
 - Կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության ամբիոն,
 - Անասնաբուժական սանիտարական փորձաքննության, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի ամբիոն:
- **Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ**
 - Ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոն,
 - Վիճակագրության և բիոմետրիայի ամբիոն:

Սեմինարի հիմնական նպատակն էր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին ծանոթացնել ուսուցման ժամանակակից մեթոդներին՝ որպես ուսուցման կազմակերպման արդյունավետ միջոց և որակի ապահովման գործիք:

Սեմինարներին մասնակցել է 27 աշխատակից:

Իրականացվել է սեմինարների արդյունավետության գնահատում՝ նախապես մշակված գնահատման թերթիկի միջոցով:

Գնահատման թերթիկների տեղեկատվությունը ենթարկվել է մշակման և վերլուծության:

Սեմինարներին մասնակից 27 աշխատակիցներից 22-ը սեմինարի թեմայի բովանդակության համապատասխանությունը իրենց մանկավարժական կարիքներին գնահատել են դրական:

Սեմինարների արդյունավետությունը՝ մասնակիցներից 40,74%-ը գնահատել է գերազանց, 40.74%-ը՝ լավ, 7.41%-ը՝ բավարար, 7.41%-ը՝ անբավարար, 3.7%-ը՝ դժվարացել է պատասխանել:

Սեմինարների արդյունքում ստացված տեղեկատվության գործնականության և օգտակարության վերաբերյալ ստացվել են դրական կարծիքներ՝ որպես նոր ուսուցման մեթոդների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

«Սեմինարի թեմայում ո՞ր մասն էր Ձեզ համար առավել օգտակար» հարցին տրվել են հետևյալ պատասխանները՝

- ցուցադրական պարզությունը,
- ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառումը և՛ լաբորատոր, և՛ դասախոսության դեպքում,
- ուսուցման պրոբլեմային մեթոդը:

«Սեմինարի թեմայում ո՞ր մասը Ձեզ չբավարարեց » հարցին տրվել են հետևյալ պատասխանները՝

- ուսուցման մեթոդներում մասնագիտական ուղղվածության բացակայությունը,
- գործնական օրինակների բացակայությունը:

Եզրակացություն

2016-2018 թթ. ՀԱԱՀ 11 ամբիոնների դասավանդող կազմի համար իրականացվել են սեմինարներ ուղղված ուսուցման ժամանակակից ուսուցման մեթոդների ներկայացմանը:

Կատարված առաջարկությունների հիման վրա որոշվել է ամբիոններում ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդներին տիրապետող դասախոսներին ներգրավվել սեմինարների անցկացման գործընթացին՝ դրա արդյունավետությունը ապահովելու և առավել գործնական դարձնելու նպատակով:

7. ՀԱԱՀ բարելավման պլանի իրականացում և հաշվետվողականության ապահովում

2014 թ.-ին, Համալսարանում իրականացված արտաքին գնահատման արդյունքների հիման վրա՝ արտաքին փորձագիտական խմբի կողմից արված դատողություններին և խորհրդատվություններին համապատասխան, մշակվել է Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական բարելավման պլան-ժամանակացույց:

ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական բարելավման պլան-ժամանակացույցում ամրագրված են եղել 10 ուղղություններով բարելավման 49 գործողություններ և 237 քայլ:

Սույն պլան-ժամանակացույցին համապատասխան վերջին տարիներին իրականացվել են համալսարանի բարելավման գործողություններ:

2016 թ.-ի հունիսին ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է ՀԱԱՀ բարելավման պլան-ժամանակացույցի կատարողականի մոնիտորինգ, որը գնահատվել է դրական:

2017 թ.-ին իրականացվել է համալսարանի կողմից մշակված բարելավման պլանի կատարողական վերլուծություն հետևյալ ուղղություններով՝

- Առաքելություն և նպատակներ,
- Կառավարում և վարչարարություն,
- Մասնագիտության կրթական ծրագրեր,
- Ուսանողներ,

- Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ,
- Հետազոտություն և զարգացում,
- Ենթակառուցվածք և ռեսուրսներ,
- Հասարակական պատասխանատվություն,
- Արտաքին կապեր և միջազգայնացում,
- Որակի ներքին ապահովման համակարգ:

Բարելավման պլանի կատարողականի վերլուծությունը ներկայացվել է հաշվետվության տեսքով և տրամադրվել է ՀՀ ՈԱԱԿ:

2018 թ.-ի դրությամբ համալսարանի բարելավման պլանը իրականացվել է, չհաշված այն գործողությունները, որոնք կրում են շարունակական գործընթաց: Մասնավորապես դա վերաբերում է պարբերաբար շահակիցների կարիքների գնահատմանը և վերլուծությանը, համապատասխան որոշումների կայացմանը, նոր սկզբունքով կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը, աշխատաշուկայի վերլուծության իրականացմանը, շրջանավարտների և գործատուների հետ կապի ապահովմանը, ստաժոր դասախոսների համակարգի զարգացմանը, դասախոսական կազմի պարբերաբար վերապատրաստումների իրականացմանը, գիտահետազոտական, խորհրդատվական ոլորտների զարգացմանը, ռեսուրսային բազայի թարմացմանը, միջազգայնացման զարգացմանը:

8. Հաշվետվողականություն և թափանցիկություն

8.1. Համալսարանի կայքի «Որակի ապահովում» բաժնի թարմացում

2017-2018 թթ. ուս տարում իրականացվել է համալսարանի կայք էջի «Որակի ապահովում» բաժնի ընթացիկ թարմացում որակի ապահովմանը ուղղված փաստաթղթերով և հաշվետվություններով:

Համալսարանը որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է իր գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը հետևյալ նորմատիվային փաստաթղթերի հիման վրա՝

- [Շահակիցների տեղեկատվության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ,](#)
- [ՀԱԱՀ շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման քաղաքականություն,](#)
- [ՀԱԱՀ շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ընթացակարգ,](#)
- [«ՀԱԱՀ ներքին և արտաքին տեղեկատվության ապահովման ընթացակարգ»:](#)

2017-2018 թթ. ուս տարում ՀԱԱՀ-ն իր գործունեության թափանցիկության ապահովման նպատակով իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

- ֆակուլտետային մակարդակի վրա իրականացվող գիտակրթական գործունեության իրականացման վերաբերյալ հաշվետվողականության ապահովում ֆակուլտետների գիտական խորհրդի նիստերին,
- համալսարանի մակարդակի վրա գիտակրթական գործունեության իրականացման վերաբերյալ հաշվետվողականության ապահովում համալսարանի [գիտական խորհրդի նիստերին](#),
- [ՀԱԱՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների վերլուծության](#) հրապարակում պաշտոնական կայքում,
- [ՀԱԱՀ որակի ներքին ապահովման համակարգի վերլուծությունների հրապարակում](#),
- Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների [ներքին աուդիտների անցկացման արդյունքների ներկայացում](#) համալսարանի գիտական խորհրդի նիստին քննարկման և հաստատման, դրանց հրապարակում պաշտոնական կայքի «Հաշվետվություններ» բաժնում:
- Համալսարանի գործունեությանը վերաբող հաշվետվության ներկայացում համալսարանի գիտական խորհրդի նիստին և հրապարակում ՀԱԱՀ կայքի [«Հաշվետվություններ»](#) բաժնում:
- [ՀԱԱՀ բարելավման պլանի կատարողականի](#) ներկայացում համալսարանի կայքում:
- Համալսարանի ֆինանսական գործունեության [արտաքին աուդիտի արդյունքների](#) հրապարակում [www. azdarar.am](http://www.azdarar.am) կայքում:
- [Համալսարանի գիտական հրապարակումների](#) ներկայացումը ՀԱԱՀ-ի կայք էջում:
- Շրջանավարտների կարիքների հետազոտության անցկացման արդյունքների ներկայացումը համալսարանի կայք էջում (<http://anau.am/hen-gear/>):
- Համալսարանի դասախոսական կազմի գործունեությանը վերաբերող տեղեկատվության հրապարակում համալսարանի [կայք էջում](#) և այլն:

ՀԱԱՀ-ն իր գործունեության և նվաճումներին վերաբերող տեղեկատվությունը 2017 թ.-ի համար հրապարակել է [ռեկտորի տարեկան հաշվետվության](#) միջոցով, որը տեղադրված է կայքի հաշվետվություններ բաժնում՝ նպատակ ունենալով ապահովելու տեղեկատվության տրամադրման գործընթացների թափանցիկությունը:

Համալսարանի տարեկան հաշվետվության մեջ արտացոլվում են՝

- ընդունելության գործընթացը՝ արտահայտված քանակական ցուցանիշներով,
- ուսանողների առաջադիմությունը,
- կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները՝ արտահայտված որակական և քանակական ցուցանիշներով,
- կադրային ներուժին վերաբերող քանակական ցուցանիշները,
- համալսարանի բյուջեյի պլանավորված և իրականացված ցուցանիշները և այլն:

ՀԱԱՀ-ի կայքը ընթացիկ ուս. տարում թարմացվել է համալսարանում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությամբ (միջազգային հանդիպումներ, աշխատաժողովներ, սեմինարներ ուսանողների և դասախոսական կազմի շրջանում և այլն), ՀԱԱՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներով (2012-2016), այլ տեղեկատվությամբ ըստ բաժինների:

ՀԱԱՀ կայքի [«Որակի ապահովում»](#) բաժինը համալրվել է նորմատիվային փաստաթղթերով և այլ տեսակի տեղեկատվությամբ:

«Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում համալսարանը մասնակցել է բուհերի թափանցիկության և հաշվետվողականության խթանման գործիքակազմի կիրառմանը, որը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

1. կառավարման մարմիններ,
2. ռազմավարական պլանավորում,
3. ֆինանսական կառավարում,
4. մարդկային ռեսուրսների կառավարում,
5. ընդունելություն, ուսանողների գնահատում, ակադեմիական կարգապահություն և ուսանողի հետ հետադարձ կապ,
6. տեղեկատվության կառավարում:

[ՀԱԱՀ թափանցիկության և հաշվետվողականության խթանման լրացված գործիքակազմը](#) տեղադրված է <http://etag.emis.am/> պորտալում:

Համալսարանի արդյունավետության գնահատումը հասարակության տեղեկատվության ապահովման ոլորտում իրականացվում է ըստ արդյունավետության գնահատման հետևյալ ցուցանիշների՝

- անհրաժեշտ տեղեկատվության ժամանակին տրամադրումը և տեղադրումը համալսարանի կայքում ըստ շահակիցների տեսակի (տեղեկատվության տրամադրման աշխատանքների կատարման ցուցանիշներ),
- ստացված արդյունքների ցուցանիշներ:
- փոխազդեցության ցուցանիշներ (հետադարձ կապ):

«Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում համալսարանը մասնակցել է բուհերի թափանցիկության և հաշվետվողականության պորտալում (<http://etag.emis.am/>) տեղադրված [գործիքակազմի լրացմանը](#):

9. Համագործակցություն ՀՀ ՈԱԱԿ-ի հետ

2017-2018 թթ. ուս. տարում ՀԱԱՀ աշխատակիցները մասնակցել են ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված տարբեր հանդիպումներին, աշխատաժողովներին և ֆորումին:

2017 թ.-ին ՀԱԱՀ-ի կողմից ընտրված ուսանողները մասնակցել են ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Ուսանողության ձայն» նախագծին:

Համալսարանի տնտեսագիտական բլոկի պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցել է տնտեսագիտական ոլորտի կլաստերի մեջ մտնող շահակիցների շրջանում ՄԿԾ-երի քննարկումներին, որի արդյունքում բարելավել է ՄԿԾ-երը:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցել է ՀՀ տարբեր համալսարանների հավատարմագրման գործընթացին, որպես կրթության ոլորտի փորձագետ:

2018 թ-ին Համալսարանի Կրթական բարեփոխումների բաժնի ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված հանդիպումներին: Քննարկվել են բուհերում կիրառվող գործընթացները, որոնք միտված են ուսուցման որակի բարելավմանը, որակի ներքին ապահովման գործընթացները, ինչպես նաև տվյալների հավաքագրումը, վերլուծումը և ռիսկերի գնահատումն այդ շրջանակներում: Անդրադարձ է կատարվել նաև ինստիտուցիոնալ հավատարմագրումների երկրորդ փուլի առանձնահատկություններին:

2018 թ.-ի ապրիլի 11-ին տեղի է ունեցել Երիտասարդ դասախոսների, կարիերայի պատասխանատուների և ուսանողների աշխատաժողով, որին մասնակցել են ՀԱԱՀ տարբեր ֆակուլտետների երիտասարդ դասախոսներ:

Միջոցառման նպատակն էր հիմքեր ստեղծել երիտասարդ դասախոսների, ուսանողների, գործատուների և կարիերայի կենտրոնի շարունակական հաղորդակցության ապահովման համար: Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին բուհ-գործատու համագործակցության հիմնախնդիրները:

2018 թ.-ի ապրիլի 16-17-ին տեղի է ունեցել որակի ապահովման շահակիցների 4-րդ ֆորումը, որը կրել է «Կրթություն և մասնագետ. մասնագիտական կրթությունն այսօր և վաղը» խորագիրը: Ֆորումի կազմակերպիչն էր Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ):

Ֆորումին մասնակցել են ՀԱԱՀ ԿԲՌՊՆՏ բաժնի, ինչպես նաև ֆակուլտետային Որակի ապահովման ներկայացուցիչներ:

Երկօրյա ֆորումի շրջանակներում քննարկվել են կրթության որակի ապահովման մարտահրավերները, առանձնակի ուշադրություն կհատկացվի թափանցիկությանը մասնագիտական կրթության ոլորտում, կրթության կառավարման նոր մոտեցումների անհրաժեշտությանը և արդյունավետության ցուցիչների վրա հիմնված պայմանագրերի համակարգի ներդրմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժինը 2017-2018 ուս. տարում կատարված աշխատանքների և որակի ապահովման ոլորտի համար մշակված փաստաթղթային հենքի հիման վրա վեր է հանել հետևյալ խնդիրները՝

- անհրաժեշտ է ակտիվացնել *համալսարան-գործատու* կապը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման, գործատուների մոտ աշխատող շրջանավարտների մասնագիտական որակների գնահատման նպատակով,
- որակի ապահովման գործընթացներում բարձրացնել համալսարանի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը,
- ստեղծել շահակիցների շրջանում հարցումների իրականացման online հարթակ:
- Յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված կրեդիտը բաշխել ըստ գործոնների՝ դասախոսություն, լաբորատոր, գործնական պարապմունք, ինքնուրույն աշխատանք և այլն: